Լորիս Ճգնավորյան

Դիրիժոր, կոմպոզիտոր

Ծնվել է 1937թ. Իրանի Բորուջեր քաղաքում:

1950-55թթ. ուսանել է Թեհրանի կոնսերվատորիայի ջութակի բաժնում, 1961-65թթ.՝ Վիեննայի երաժշտական ակադեմիայի ջութակի ֆակուլտետում:

1965-66թթ. մասնագիտական կատարելագործում է անցել Զալցբուրգի Մոցարտեումում:

1970-75թթ. եղել է Իրանի մշակույթի նախարարության ժողովրդական երաժշտության արխիվի տնօրենը և ներկայացուցիչ-կոմպոզիտորը, այնուհետև՝ օպերային թատրոնի գլխավոր դիրիժորը, «Փեհլևի» մշակութային հիմնադրամի երաժշտական գլխավոր տնօրենը:

1975թ. ապրել և աշխատել Վիեննայում, որից հետո՝ Նյու Յորքում, Լոնդոնում:

1978թ. Լոնդոնում հիմնել է հայկական երաժշտական ինստիտուտ:

1989թ. Հայաստանի իշխանության հրավերով եկել է Հայաստան և երաժշտական գործունեությունը շարունակել հայրենիքում:

1989-2000թթ. ղեկավարել է Հայաստանի ֆիլհարմոնիկ նվագախումբը. եղել է գլխավոր դիրիժորն ու գեղարվեստական ղեկավարը: Կազմակերպել է սիմֆոնիկ երաժշտական փառատոներ՝ «Աշխարհը և մենք», «Արամ Խաչատրյան-90», «Եղեռնից մինչև անկախություն...», ինչպես նաև «Հոգևոր երաժշտական ժամ» համերգաշարը և այլն:

1991թ. դեպի Գյումրի ուխտագնացության ժամանակ հիմնել է Գյումրու մշակույթի կենտրոնը և դարձել է տեղի սիմֆոնիկ նվագախմբի պատվավոր գեղարվեստական ղեկավարը: Նույն տարում Երևանում հիմնել է «Երիտասարդ սիմֆոնիկ նվագախումբ», իսկ 1994թ.՝ Հայաստանի ֆիլհարմոնիկ երգչախումբը:

Նրա գրչին են պատկանում «Աղավնու վանքը» (1961թ.), «Ռուստամ և Զոհրաբ» (1962-64թթ.), «Փարդիս և Փարիսա» (1972թ.) օպերաները, «Ֆանտաստիկ» (1958-61թթ.), «Սիմոնգ» (1975թ.), «Օթելո» (1984թ.) բալետները, ինչպես նաև բազմաթիվ օպերետներ, 5 սիմֆոնիա, կոնցերտներ, նվագախմբային, խմբերգային, կինոերաժշտական ստեղծագործություններ:

Արժանացել է «Սբ. Սահակ - Սբ. Մեսրոպ» շքանշանի, «Մովսես Խորենացի» մեդալի: